# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2038-Ա « 22 » մայիսի 2025 թ.

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.29/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3923.54ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ֆոտոմաստեր» ՍՊԸ-ի լ/ա Մարիամ Մանուկյանի դիմումը՝ Մոսկովյան փողոցի հ.29/4 հասցեում, վարձակալության իրավունքով «Ֆոտոմաստեր» ՍՊԸ-ին տրամադրված 3923.54քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01042025-01-0056 վկայական/ ենթավարձակալության տալու թույլտվության մասին:

Նշված հողամասը, համաձայն հողամասի վարձակալության հ.6530 պայմանագրի, մինչև 2026 թվականի փետրվարի 12-ը վարձակալության իրավունքով տրամադրվել է «Ֆոտոմաստեր» ՍՊԸ-ին:

Հաշվի առնելով հողամասի վարձակալության հ.6530 պայմանագրի 4.3-րդ կետը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով.

1.Թույլատրել «Ֆոտոմաստեր» ՍՊԸ-ին՝ Մոսկովյան փողոցի հ.29/4 հասցեում գտնվող 3923.54քմ մակերեսով հողամասը հանձնել ենթավարձակալության՝ «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ-ին:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**